

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» հունիսի 2014թ.

N 372-Ն

ք.Ստեփանակերտ

**ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆ ԱՆԿՈՐՈՒՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի անկորուստ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հակահրդեհային միջոցառումների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ներկայացրած հաշվարկների հիման վրա յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան միջոցներ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ բերքահավաքի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի մայիսի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ
ԲԵՐՔԱՀԱՎԱՔՆ ԱՆԿՈՐՈՒՄՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ՝
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի (այսուհետ՝ բերքահավաք) անկորուստ կազմակերպմանն ուղղված հակահրդեհային միջոցառումների (այսուհետ՝ հակահրդեհային միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **հակահրդեհային միջոցառում**՝ բերքահավաքի ենթակա ցանքատարածքներին (այսուհետ՝ ցանքատարածքներ) հարակից հրդեհավտանգ տարածքների և ցանքատարածքներ տանող ճանապարհների եզրերի բուսականությունից մաքրման և պաշտպանիչ շերտի հերկման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ցանքատարածքներում հակահրդեհային անվտանգության ապահովման համար շուրջօրյա հերթապահության կազմակերպումը.

2) **հակահրդեհային միջոցառման մասնակից**՝ հակահրդեհային միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

II. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Հակահրդեհային միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) բերքահավաքի ընթացքում համակարգում և վերահսկողություն է իրականացնում հակահրդեհային միջոցառումների իրականացման գործընթացի նկատմամբ.

2) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը, ցանքատարածքների հրդեհային անվտանգության ապահովման համար, բերքահավաքի մեկնարկման օրվանից ցանքատարածքներում տեղադրում է շարժական ճամբարներ և սահմանում շուրջօրյա հերթապահություն՝ շարժական ճամբարներին ապահովելով համապատասխան տեխնիկական միջոցներով.

3) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը, ցանքատարածքների հրդեհային անվտանգության ապահովման համար, բերքահավաքի ընթացքում անտառապահների ուժերով կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն՝

ցանքատարածքներին հարակից անտառներում և անտառհատվածներում արգելելու և (կամ) կանխելու որսորդությունը և կրակի վառումը:

4. Հակահրդեհային միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված տարածքային կառավարման մարմինները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը, ցանքատարածքների հրդեհային անվտանգության ապահովման համար, բերքահավաքի մեկնարկման օրվանից՝

1) ցանքատարածքներում համայնքների բնակչության և հողօգտագործողների մասնակցությամբ ձևավորում են շուրջօրյա հերթապահություն իրականացնող ճամբարներ՝ դրանք ապահովելով համապատասխան տեխնիկական միջոցներով (թրթուրավոր տրակտոր, հրդեհի մարման առաջնային միջոցներ):

2) բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ են ծավալում բերքահավաքի հետ կապված հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ:

3) հնձված տարածքների ինքնակամ՝ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն համաձայնության կամ մասնակցության, հրկիզման դեպքերը կանխելու ուղղությամբ ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ:

5. Հակահրդեհային միջոցառումների մասնակիցները յուրաքանչյուր տարվա համար՝ նախարարության սահմանած ժամկետներում նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով հակահրդեհային միջոցառումների իրականացման գործընթացում իրենց կողմից ձեռնարկվելիք աշխատանքների կատարման տեղանքը, ծավալը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

6. Հակահրդեհային միջոցառումների ֆինանսավորման համար հիմք են հանդիսանում հակահրդեհային միջոցառումների մասնակիցների կողմից սույն կարգի 5-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան նախարարություն ներկայացվելիք տեղեկությունները:

7. Նախարարությունը, սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո 15-օրյա ժամկետում, ընդհանրացնում է ստացված տեղեկատվությունը և դրա հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնում համապատասխան հայտ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ սույն կարգի 7-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով հակահրդեհային միջոցառումների իրականացման համար նախատեսված գումարների հաշվին հակահրդեհային միջոցառումների մասնակիցներին հատկացնում է համապատասխան միջոցները:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ